Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lu4
369

N189

13.

162

Шифр 369
№ 102
1580

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ԵՐԿՈՒՑ ԸՆԿԵՐԱԿՑԱՑ

ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Գ. ՆՃԱՆ ՄԻՐԶԱ ՎԱՆԱՆԴԵՑՒՈՑ

ԵՒ

Ե. ԹԱԳԻՈՐ Ս. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆԻ

ՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1866

УЧЕНИЧЕСКАЯ БИБЛІОТЕКА
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
„ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.“

3252

Պարտեզագործ.

Հայ. Լեզուի Ինստիտուտ
Գոս. Գր. Գ. Բնիչյանց
ՀՍՍՀ-ՍՍՌ
Ազ. Ա. Միասնական
Ս. Սեվանի անվան գրադ.
369-2003
(4844
38)
28-368

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԶԻ՞ՆՉ արդեօք քան զայս պատեհ առիթ գլուխ սրտից վերոց Ռուսումնասէր Հասարակութեան յայտնել ՝յ, իսկ մեծ որ առանց չափազանցութեան անդատին 'ի մանկական իշՀ տիոց վերոց եւ քան զտիս մեր աՀեր եւ զարգանայր, այս մեր իսկ բնաւին է ՍԷր Սգգութեան որ ուրոյն ուրոյն 'ի վաստաբանի հոգւոյն աՀի զարգանայ ընդ Հարի հասակին եւ ոմանց եւ քան զՀարի եւս հասակին :

Դոյր 'ի մեզ դիտաւորութիւն ինչ 'ի ժամանակաց հետէ՝ թէ եւ կարի յանդուգն եւ դժուարին, ձեռնարմուխ չինել յայսպիսի գործ եւ աՀել 'ի յոյս գչափաբերական գրութիւնս մեր, որք յաշակերտութեան անգին ժամանակի մերոյ քրտանց պտուղք էին եւ ոչ ընդ գրուանաւ թողուլ թէեւ անոՀ եւ անիմաց վստահացեալ 'ի խրախոյս եւ յընդունելութիւն ուսումնասէր Հասարակութեան :

Եւ արդ եթէ սոյն այս մեր առաջին ձեռնարկ հաճոյ թուեացի, խոստանամք եւ զայլ եւ այլ երկս մեր թէ չափաբերական, թէ թատրերգական եւ թէ արձակ աՀել 'ի յոյս այնու վստահացեալ զի եւ Ռուսումնասէր Հասարակութիւնն չ'զլանայ գիւրումն գոհունակութեան գհաւասարի նշանն շնորհել մեզ, եւ միանգամայն հաւասարի գոյով զի եւ սիրայանաց յակամայից սպրդելոց Հերողամիտ չիցի :

Գլ. Նախարարություն
Գոս. Պետ. Գրադարան
Հայ ՍՍՀ-ՍՍՀ
Գ. Գ. Ա. Մասիսյան
Ազգային գրադարան

ԾՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՍԻ

ՓՐԿՉԻՆ ՄԵՐՈՑ

ԱՐՔԱՅՆ երկնից եօթնասս եղեանն 'ի կամար
Ի յարփեանին բազմեալ 'ի դահ՝ ամպածրար,
Եւ հոլաթևք մեծին բընակք Ողիմպին
Արփիաձեմ պար բոլորեն Արքային։
Նա անդ ըզհէք զազգ նշմարեաց մարդկայնոյն
Շաղախ 'ի մեղս գոռ նախահօրն դառնագոյն,
Եւ տես զերամ ողջախոհիցն խիտ առ խիտ
Ի յարտասուաց նստեալ 'ի մութն 'ի հովիտ.
Ուր Եբերեայ մեծն այն Իշխան ամենի
Անդընդեհպետն յիւր հըրաշէկ եռսայրն.
Սովալըլուկ տանջէր զնոսա հէ՛ք երամ,
Եւ նոցայն ճիչ մինչ 'ի յեթեր տայր պատգամ։
Ըզմարդկութեան զայս դառն օրհաս հիքալի
Արքայն անմահ տեսեալ աչօքն արփենի,

Ի գուլթ հարաւ մեր խղճալեացս 'ի վերայ՝
Եւ զխէթ թողեալ տակաւ տակաւ հեզանայ։
Սառնամանեաց հանգոյն լերանց 'ի կատար
Յորժամ ծագէ զնոքօք վեհ ուստր (1) լուսավառ։
Եւ հուսկ ուրեմն որ տայ շըրջան աստեղաց
Ցիւր դահոյից որոտընդոստ ձայն եբարձ.
«Ազգք և ազինք, առէ՛ք զնուադ բերկրալին
«Գայ օր, բացցին սըրբոց, դըրունք Եթերին»։
Եւ արդ անմահ ողջախոհիցն այն սուրբ գունդ
Ի յանարևն նստեալ 'ի խորն 'ի յանդունդ
Յուշ զաւետեացն ածեալ ըզբան Եթերին՝
Ի վեր յաստեղս ձայն զայս կարդան փարելին.
«Անմահդ Աստուած, որ 'ի յՈղիմպ կաս բազմեալ,
«Երբէք երբէք դարձո՛ քո զաչս լուսավառ
«Եսբերոսին յայս տուն յաւէրժ անարև.
«Ուր է գուպար անբաւ խօլից չարադև։
«Փըրկեա՛ ըզմեզ յայս 'ի խաւար 'ի բանտէս.
«Զոր խոստացար՝ տուր մեզ զերկնից՝ ասպարէս։
«Եւ սըրաթռիչ եղեալ արքայդ ամբաչու
«Ե՛կ սակաւ ինչ զօդ մեր շնչեա՛ մահացու»։
Ասայ լռեաց ննջեցելոցն սուրբ երամ
Եւ յՈղիմպոս թռեան մրմունջք բիւրակնեան
Էն գորովեալ կրկին 'ի յաղդ մարդկային
Ի յայս աշխարհ զիւրն առաքէ Միածին։

---

(1) · Արեգակն։

Որ իւր արեամբն անէ՝ սրտակիր Աստուածեան
Ընդհետս մեղայն նա ընդունեցէ նախնական։
Դուստրն Մարիամ ո՛հ հրաշագեղ քանի՞օն
Որ տարփացաւ կրօնից կուսից երկնակրօն։
Յորժամ ըզցայդն 'ի սրսկապան էր նա ընդունի
Եւ զդուշակաց բանս երազէր հոգերդիչ։
Երկնից կամարն փեռեկեցաւ կէս 'ի կէս,
Եւ հոլաթևք ելին սրացան յասպարէս.
Քաջ պատանիքն 'ի դլուխ պըսակ արփային,
Զար բոլորեն դեղազուարթ արքային։
Եւ Երատեան նուագք քաղցրիկ միշտ հնչէր
Յաստեղազարդն յարփւոյն կամար 'ի յեթեր։
Հայրըն Աստուած որոտընդոստ ձայն ահեղ՝
Հրափայլ յամպոց Մարիամայ յունկն եհեղ.
«Ո՛վ նաղելի դու սուրբ կուսան վեհապանծ,
«Ո՛վ աշխարհի արփիափայլ ջահ անանց,
«Ծընցիս որդի դու Գերաբուն հրաշազան՝
«Ընկուսութեանդ ըզվարդ պահեալ անթառամ։
«Նա ըզՅիսուս առցէ ըզվեհն այն զանուն.
«Յիսուս փակտիչ տանն Երեբեայ բա՛ ողջոյն։
«Երկինք երկիր և արարածք բընաւին
«Նըմա հարցեն շուք Աստուածեան երկնային։
«Արքունական նա թագ կալցի յայս աշխարհ,
«Եւ ընդունեցէ բնաւին ըզկոծ և զաշխար»։
Ասաց լուեաց, և դունագոյն բակ ամպոյն
Ոսկեձամուկ 'ի յիւր 'ի թև քըրքմագոյն.

Ընդնալելին պարունակեայ ըզսուրբ կոյս
Եւ անդ հրահոս շանթիւք տեղան վառ 'ի լոյս։
Հայրըն հրզօր փչեաց ըզսիւքն արփալին
Անապական 'ի սուրբ յարդանդն վերհ կուսին։
Յղացաւ նա՝ զիւր վարդ պահեալ անթառամ՝,
Եւ Բանն Աստուած առ 'ի յարդանդն բազմական։
Վերնաձեմիցն պար հոլանեալ դեղապսակ
Ծափիս հարեալ կայթս հարկանեն 'ի նուագ։
Դընդայ ահեղ Ողիմպոսին արտեան
Յորոտն ահեղ հրահոս շանթից բերկրական։
Յարեաւ 'ի քնոյն ԱՍՏՈՒԱԾԱՄԱՑՐՆ նազելի,
Եւ 'ի վերայ այտից քնքուշ դեղանի։
Ուղիս արտասուաց կըրէր Էին սուրբ ծընող
Հանդոյն վարդից Երեկոյեան քաղցր 'ի ցող։
Յարիաւ ապա և զՀրաշալիս զոր ետես
Իւր փեսային պատմեաց ոճով դեղապէս։
Յապուշ հարաւ անդ Յովսեփոս ծերունին
Եւ օր աւուր ըղձայր 'ի տես արքային։
Անդ Թագք Կասպեան 'ի գուշակացն սարսեցին,
Նոյն և Նեղոս, նոյն և Տիբեր պանծալին։
Ողջ Արևելք 'ի դող հարաւ 'ի ձայնէ
Թէ Էն անմահ 'ի լոյս կենաց եկեալ է։
Նա Թագ կալցի 'ի տիեզերս այս ողջոյն
Եւ զՃեռ մարդկան յՈղիմպ տարցէ յարփենուոյն։
Այսպէս ահա երկինք երկիր լայնատարը
Ըզսուրբ զալուստ Բանն Աստուծոյ խոստանայր։

Եւ ծերունի փեսայ կուսանն նազելի
Աչք անքըթիթ կայր 'ի ծընունդն սուրբ Փրկչի.
Համբաւատեսչն այն Աւգոստոս քաջ կեսար,
Որ ունէր զգահ պերճն այն Նումայ և արդար.
Ահա յայնժամ տայր հրաման սատակապէս
Ի յընդհանուրս առնել համար և հանդէս.
Արդ և Յովսէփ 'ի Հոյրենին իւր քաղաք
Յարեաւ 'ի չու ընդ իւր հարսին գեղապսակ.
Անդէն Արեգն արփիափայլն գեղանի
Գրաւեաց զիւր կառս ճաճանչապել հրաշալի.
Այսպէս ահա և խոր գիշեր առ զաշխարհ
Եւ Եթերին ճրագք տային լոյս պայծառ.
Ուղի հատեալ յաստեղազարդ գիշերին
Մըտին 'ի շէնն 'ի յանաւագ աղքատին։
Անդ ծերունւոյն ակունք ծանրեալ 'ի քընոյ
Զվէմ ապառաժ եդ 'ի հանդիստ իւր գլխոյ.
Եւ նազելին նստեալ յարդից 'ի վերայ
Մըտօք ծծէր ըզսիւք Վերնոյն այն անմահ։
Ահա յանկարծ Ոգիմպոսին արտեւան
Փարատեցաւ Աստուածապէս հրաշազան.
Բանըն Աստուած Փրկիչ արքայն երկնային
Ի յաշխարհի 'ի գիրկ հանգչէր Մօր կուսին.
Յարդք ըրնաւին ճարակք եղինն այն անմեղ
Ի յոսկեղէն դարձան 'ի լոյս հրաշագեղ.
Դաշտըն ամբաւ զերթ ճրագ արփի էր 'ի վառ
Եւ տայր հովուացն որ 'ի դաշտին զահ անճառ։

Սակայն Արքայն, որ ամսեղայ տայ շարչան,
Ի բալաձիգ 'ի պար յամպոց կարդայ ձայն.
«Փարատեցէք դուք բընաւին ըզձեր ահ,
«Զի աշխարհիս ծընաւ Փրկիչ երկնակայ.
«Ըզնա տեսցէք յայդ ձեր 'ի մերձ 'ի մրսուր
«Մանուկ չըքնաղ և նորածին վառ զերթ հուր՝
«Վերայ յարգից եղեալ ծնօղին առ ընթեր».
Ասաց լուեաց և վերնաձեմքն 'ի յայեր
Հնչեն կիթառ, նաև բարձունք Ողիմպին
Տան արձագանգ ուրախութեան հրաշալին։
Իսկ պար հովուաց յապուշ հարեալ 'ի հրաշից
Դիմեն զնան անդր 'ի մսուր տուն երկնից.
Այն ինչ Աբեղն սփռէր զիւր լոյս զեղագէս
Նոքա մրտին 'ի յԱստուածեանն 'ի հանդէս.
Երկրրպադեն սրբոյ Փրկչի նորածին
Եւ ձօն ձօնեալ տան նմա շուք երկնային։
Իսկ ծերունին ալևորեալ վեհ փեսայ
Որ կայր մընայր 'ի յայս տեսիլ երկնակայ.
Ի յիւր 'ի սիրտն այն խընդալից անպատում
Անդ ըզՅԻՍՈՒՍ նըմա ձօնէ սուրբ զանուն.
Երկիրդ բնաւին զուրախութիւն միշտ երգեա՛
Զի յանցանացդ ծընաւ ՓՐԿԻՉ քեզ ահա՛։

1865 Ե. ԹԱԳԻՈՐ Ս. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ԱՌ ՎԱՍԵՄԱՓԱՅԼ

ԽՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

ԲԱՐԵՐԱՐ ՀԱՅՈՑ

Սրդոցդ քաղ բաղմադարեան փարատե՛ա վեհդ Այ-
րարատ,
Մոռացիր 'ի սպառ զանցեալս յիշատակ նոր 'ի ճակատդ
Փայլեսցի յանուն դրօշմեալ Ազգասէր բարերարի
ՆՈՒՊԱՐԵԱՆ տոհմին պարծանք ՆՈՒՊԱՐԱՑ վեհ փաշային։
Տաղանդիւ որ հրմտական զասպարէզս հերձեալ փառաց,
Ամբարձաւ յաւագութիւն յաստիճանս՝ 'ի դերապանծ.
Յաստիճանս վերսեմական մինչ սակաւք՝ 'ի մերազնեայց
Արժանի հանդիսացան այնպիսի չընչաղ փառաց։
Ի Սօրէղ (1) առեալ սընունդ վեց լեզուաց (2) 'ի հրմ-
տութիւն՝

---

(1) Սօրէզ է քաղաք 'ի Զուիցերի, յորոյ դպրոցէն յառաջացան անուանի գիտնականք, փաստաբանք, արհեստաւորք և զօրականք, և որ հռչակեալ էր յաղագս իւրումն ազատասիրական սկզբանց և անկախ ոգւոյն, յորում և Նուպար փաշա 'ի պատանեկան հասակին թեքեցաւ յայլ և այլ գիտութիւնս։

(2) Գաղղիարէն, Անգղիարէն, Իտալերէն, Յունարէն, Արաբերէն և Հայերէն։

Ապագայիւր բարձրութեան հաստատեաց հինն հաստատուն
Ախորժակք վքսեմականք գաղափարք հայրենաշէն
Նուպարայ ըզխոհական առոյգ տիս շուրջ պաշարեն։
Զշրջան դրպրոցական աւարտեալ տաժանելի,
Դարձ արար մտաց գանձիւք յԵգիպտոս 'ի բարելի.
Մուտ անդէն յիշխանութիւն, 'ի պաշտօնս Եգիպտական,
Յաջողակ յամենայնի ամբարձաւ թարգմանութեան։
Ի Փարիզ ուղեւորեալ փոխանորդ փոխարքայի,
Տեսչութեան իւրումն յանձնեալ զիրս կնճռոտ զիրս
Սուէզի։
Շահաւէտ իւր Տէրութեան շահաւէտ գաղղիացւոյ,
Հանճարուվանպիտ պարզէ՝ զփոխարքայն զերծեալ՝ հողւոյ
Իպրահիմ՝ զԵգիպտական որ յայնժամ ունէր ըզգահ,
Կարևոր գործոց յաղագս 'ի Փարիզ ժամանեալ զայ.
Զմայլեալ ընդ խոհականն նուպարայ ուշիմութիւն,
Ընդ նմա խորհի զընալ արքային 'ի տեսութիւն.
Պաշտօնեայն[1] ներքին գործոց ընդդիմակ հանդիսացեալ
Խորհրդոց փոխարքային, ըզհասակն առնու պատճառ[2]։
Իպրահիմ չընդհանդուրժեալ բարբառի զայս օրինակ.
«Զիմ թարգման 'ի սիրտ սիրեմ հարազատ իբր զիմ զաւակ.
Զունիցիմ թէ զնա ընդ իս՝ 'ի տեսոյդ հրաժարիմ,

---

(1) Մ. Կիզօ։

(2) Ի հատակի հազիւ 21 տարեաց։

Լաւ է ինձ զսիրել զերկրորդն ըստանել քան զառաջինն։
Պաշտօնեայն զինչեալ 'ի կամս, յանձն առնու զփոխարքային,
Արքային Լուսի Փիլիպ 'ի տես զնան 'ի միասին։
Փիլիպպոս անդ ըզմայլեալ Նուպարայ ընդ հմտութիւն,
Շընորհէ Աէպէոնեան պերճ միտալ ըստ արժանւոյն։
Արժանի հանդիսացար այնպիսի չքնաղ փառաց,
Արժանի հանդիսացիս ես վըսեմ աւագութեանց։
Զանձդ խոհեմ փառաւորես ցանկալի 'ի շուքս փառաց,
Զի օգտի հայրենակցացդ օժանդակ հանդիսանաս։
Օր աւուր բըզխին բարիք զգացմանց քոց յայտարար,
Զգացմանցդ հայրենասէր, նո՛ր Հայոց նոր Ոսկի դար։
Ազգային բիւր պատակմանց ընդ միմեանս անհաշտ խ-
պառ,
Խոհական վեհ հմտութեամբ մարթացար պոլ հաշտարար։
Ըզկըտակս նուիրատուաց բարեպաշտ և ազգասէր
Զերծուցեալ 'ի կորստենէ՝ յազգին ծոց դու դարձուցեր։
Այլ անուանդ եղև անմահ վեհդ Փաշա 'ի յաշխարհի,
Նոր թողեալ ըզձիցդ բարի ապացոյց անհերքելի։
Կրտակաւ Վարդապետի հանդուցեալ Նուսումնական[1],

---

(1) Հանդուցեալ գերբարձանիկ Կարապետ Վ. Շահնազարեանց 'ի կենդանութեան իւրում կոտակեալ էր զինչս և զասացուածս իւր 'ի մի հաւաքել՝ և նոքօք հայթայթել զծախս գիշերօթիկ վարժարանի յիւր անուն նորոգ կառուցելոյ 'ի Կիլիկիա, և զի գումարն չբաւէր հայթայթել զծախս, վճռեալ էր զի գումարն 'ի տոկոսի ճեպցէ 'ի վսեմաբոյլ Նուպար Փաշայ, և 'ի նոյնն արդիւնաւոր և ազգասէր կամն

Որ յօդուտ էր հաստատեալ որբ անուս մանկանց Հայկ-
եան։

Ի նորայն երեքպատիկ յաւելեալ 'ի քէն դումար,
Աշխարհին Հայաստանեայց ծաղեցեր նոր Ոսկի Դար։
Պանդխտաց համազգային տաճապեալ ընքաւորաց
Լի բաշխեալ ատատ նուէրս հայր նոցա հանդիսանաս։
Ըստ կարգի քոյդ յերախտեաց զՈրս 'ի գիր արկից ատէն
Վեհ արդիւնք Ազգասիրիդ ելևէջս միմեանց առնեն։
Զի՞նչ ապա մեզ ասա մընայ բայց եթէ ուղղել մաղթանս
Առ Բարձրեալն 'ի յերկարել բարերար վեհիդ զկեանս։
Գոչեսցուք, ո՛ Հայկազունք, ցորչափ ծաղկին ծաղկունք
Գարնան,
«Կեցցէ՛ վեհն ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ բարերար անղուղական»։

1866 Գ. ՆՇԱՆ. ՄՒՐԶԱ ՎԱՆՆԱՆԴԵՑԻ։

յանձնեալ էր գշինութեան ժամանակն, գոհաչութիւնն, և այլն։ Արդ Նուպար Փաշա ցանկացեալ յաղդօդուտ կոտակին ըրուծն 'ի բարեպաշտութիւն և յազգասիրութիւն վարեալ Նուիրեայ յիւրումն անձնական գանձէ 3000 ոսկիս 'ի շինութիւն վարժարանին, որով ետ անզուգական ազգասիրութեան իւրում Հաւատի ապացոյց և եթող զբարի անուն իւր 'ի գիրս անմահ 'ի դիտութիւն ապագայից։

ՈՍԿԻԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՅԱՒՈՒՐՍ ԱՐՏԱՇԻՍԻ

ԵՒ ՄԱՐՏ ՆՈՐԱ

ԷՆԳԳԷՍ ԱԼԱՆԵԱՑ

ԱՐՏԱՇԻՍԻՆ այնինչ դրօշակ յազատն պանծայը
'ի Մասիս ,
Յայնժամ թարգում հնչէր զկիթառ խաղաղ և զուրկ
յաղիսից ,
Ա՛հ իմ զրիչ չաւէ երբէք հիւսել 'ի տառս Հայ-
կական ,
Արարատայ փառացն զհանդէս որ յայն դարուն 'ի
ղերջան .
Հելլենայուոյն՝ աստ պիտի ձեռք դիցանուէր հրա-
շալի ,
Հեղուլ 'ի գիր՝ զարդիւնս քաջին աշխարհակալ մի-
առ մի :
Ամպրոպային վեհն Աթենաս իմաստութեան գանձ
անհուն

---

(1) Հոմերոս հայր բանաստեղծից :

Սաւառնաթև հաս յԱյրարատ, անդ թաղ կապեաց աւաջնում.

Ահա անդէն, ո՛հ հըրաշից մեծամեծայ է հանդէս, Բնաւից արքայք Ողիմպոսի զաւակք Դիայ շանթընկէց՝

Որոց բնաւին չմերձենայ մահու մկրատն Ատրոպէան, Եւ աշխարհիս նոքա շնորհեն օրէնք կանոն և սահման.

Ահա յանկարծ յառնուն ոսկի՝ի պահոյից աստուածեան

Եւ զոսկեկուռ առնուն զարփի շաքեղ զիւրեանց գաւազան.

Ճամբարքն ստուար ւքեալ զՈղիմպ ընդ խիստ այերս նաւարկեն,

Եւ ստանան լեռինն կատար առնուն բազմոց ամպաճեմ,

Անդ գիւցազունքն միահամուռ յոսկի շեփոր քաղցրանուագ

Շնորհեն օրէնք տանն Թորգոմայ, օրէնք կանոնք բաւեկարգ.

Լուաւ անդէն լուաւ գիւցազն վեհ Արտաշէս քաջ արքայ

Զփողոցն հնչիւն և ըզհրամանս Ամպրոպայնոյն երկնակայ.

Ի պահոյից յարեաւ յոսկի և զօրինայն ըզհանդէս

Փուլթանեակի 'ի կատարումն ած յԱրտաշատ Ճոխա-
պէս.

Տակաւ տակաւ վերն Այրարատ առնոյր զպսակ ծաղ-
կալից,

Եւ 'ի հիւսիս նա գեր 'ի վերուներ զիւր դահ, վերհ
Մասիս:

Եռես անդէն. ո՛հ քանի՛օն չար տղիտից ձեռըն-
տուն...

Եռես դժնեայն... ա՛հ սարսա՛փիմ... հայրն Ճի-
ւաղաց դոռ դասուն...

Հօրն Արիսի Ամպրոպայնոյն զասպարէսն մերկ և թա-
փուր.

Եւ ալէկոծ ծրփայր յուզմունս նա խորհրդոց 'ի տը-
խուր.

Յառնու ապա յիւր դահոյից, արբանեկից զդաս
դոչէ,

Եւ անդ խաւարն դղրդէր հիմամբ դոչիւնք ձայնին
անճառ է.

Յայնժամ ահա դան և խրոնին Երեբոսին 'ի յատ-
եան

Դուպարք հրէշեցն և Ճիւաղաց նըսեմաստուեր և դա-
ժան.

Պետն խաւարաց արքայն դժնեայ առ զեռաժէնն դա-
ւազան

Եւ 'ի յաթոռ իւրում բազմեալ դոռ հրրէշեցն յե-
ռեան,

369-2003
(4844 38)

«Իմ արքունեաց, նա բարբառի, հըղօր ճիւաղք ախոյեան

«Ահա թորգոմ կայ 'ի խաղաղ ւ'ի ճակատուց բացական.

«Եւ որ 'ի ձէնջ կարէ խսպառ զնոցայն վիճակ աւերել

«Դիմեսցէ՛ արդ և զընծայից նա զանձունի անարդել».

Ասաց լըռեաց, անդընդեհպետն ճիւաղն ահեղ ցասճնալից,

Որ 'ի յաշխարհ յաւէտ զեղու զաշխարս և զողբաղիտից.

Սրանայ անդէն հըղօրագոյն նախանձն խուժդուժ մարդակեր

Եւ ըղտուսեր նա զիւրսըրէ դործել ըզմեծն այն եղեր.

Ընդ վիհն անցեալ խաղայ դընայ առ Ալանաց վեհ արքայն

Ի սաստ հարուածս վիրաւորէ ըզնա հըրէշն հրաշազան.

Ոստնու արքայն խելացընող նորա վիրացն ըզհամար

Զկարէ երբէք մահկանացուաց առնուլ լեզուն բա՛ 'ի ճառ.

Հէք և թշուառ 'ի յերուսաղէմս ճըչէ ողբայ ցաւագին

Եւ յիւր յուզմանց չ'իշխէր փակել զաչսըն 'ի նինջ բընաւին.

Նա դարձուցեալ զաչսն ըզլոյս 'ի Հայկազանց 'ի յաշխարհ

Հառաչանօք 'ի սիրտ նախանձ տայ 'ի յայերս շատ բարբառ.

«Ո՛վ դու արքայդ, նա ուժնապէս ընդ իւր անձին բարբառի,

«Ո՛վ Ալանաց հըզօր պաշտպան յորմէ աշխարհ զարհուրի,

«Զի՞ կաս անփոյթ 'ի պալատանդ մարդահաճոյ ընդ ստրուկս

«Մինթէ վատաց ըզքեզ Դիոս կարդեաց արքայ մեծաշուք։

«Աղէ, զարդէր առ ըզքո զէնս վեհդ Ալանաց ախոյեան

«Յառաջ խաղա՛, մի՛ դու յաւեր յԱրարատայ 'ի սահման»։

Ասաց արքայն, և փութապէս զօրավարացն ըզդուպար

Կոչեաց առ ինքն և մերկացաւ իւր ըզխորհուրդ յայտնաբար։

Թընդայ ատեան դղրդին հիմունք խրախուսանաց 'ի ձայնէ.

Յայնժամ արքայն նիզակակցաց իւրոց զխորհուրդն ազդ առնէ։

Պարք քաջազանց, Որդիք Արեայ զիւրեանց բացեալ ըղձակատ

Եւ մանկըտին առ հասարակ դիմեն փութան 'ի ձակատ։

Լուեալ արքայն վեհն Արտաշէս ըղդողդալուստ ոսոխաց.

Ի յՈղիմպոս նա զայս յանձնէր 'ի խոր սրտէ ըղհայցուած։

«Ո՛ անմահից դուպարք վըսեմ որ 'ի յԵթեր ունիք զահ

«Զիս զեզկելիս առէ՛ք 'ի նշմար ձեր յաթոռոցդ երկնակայ,

«Ահա ոսոխն զայ 'ի պարիսպս օրհաս զուժէ մահաբեր։»

Ասայ լուեաց, և ողբք ճախրեալ դիմեն զնան ընդ եթեր.

Աստեղազարդըն գըղըրդի Ողիմպոսին մեծ կամար.

Եւ աստուծոյ զարթնու բնաւին ահեղախրոխտ զուդպար։

Ահա անդէն և Աթենաս դուստրըն Դիայ քաջմարտիկ

Յարեալ՝ յոտին դընէ զսօլ՝ երս արփիափայլ ընթացիկ,

Եւ զսաղաւարտ եդեալ 'ի գլուխն ոսկեհուր հրաշագան,

Զպալարակապն առնու զվահան և ըզնիզակն յաղ-
թական,
Լքեալ զկամարըն եթերին զայ ընդ այերս սաւառ-
նեալ,
Եւ 'ի հրոսակ նա Հայկազնեան հընչէ զշեփորն ոսկե-
փայլ.
Հըղօր մարտիկք, Որդիք Հայկայ 'ի շեփորին սաստ
'ի ձայն
Զպողովպատիկս մերկ 'ի ձեռին 'ի դաշտ դիմեն Ա-
րիսեան։
Անդ Արտաշէս, նորն Աքիլլէս քաջակորով և անձ-
նեայ
Ի Թրակացին վերամբարձեաշ 'ի յերիվար յառաջ
զայ,
Ոսկի մանեակք երիվարին էր ըզլանջիւք ճոխ կա-
խեալ,
Եւ ոսկեհուռ ծամէր զխարտեաշ նա սանձն ոսկեակ
լուսափայլ.
Անդ 'ի գլլուխ ախոյենին էր բարձրաբերձ սաղա-
ւարտ,
Եռահիւսեակ և արփենի ցըցունքն 'ի բաշ զեղա-
զարդ։
Հայը գիւցազանց Հայկ բարձրաբերձ իւր 'ի գլլուխ
հրաշազան.
ԶԱրտաշիսին զեղազարդէր ըզլուսափայլըն վա-
հան,

Իբր ըզԼիկեան քաջ որերոյն նա կազմ բնաւին 'ի
յանձն իւր ,
'Ի Ամազոնին զերթ Կամիլլայ[1] կրէր մրտենին[2] ծայ-
բաստուր ։
Հեռաւակաց ամպրոպ ըզհետ չուէր խաղայր և հրրոս.
Եւ Արիսի մեծ ասպարէսն լը ցաւ զոչիւն 'ի Հայոց .
Ոսոխն հրզօր և կատաղի ունէր 'ի կազմ իւր զու-
պար ,
Եւ երկոցունց սայր սուսերաց կայր 'ի շեփոր աղդա-
րար ։
Հնչի շեփորն և քաջազունքն զիրեարս բաղխեն սաստ-
կաբար ,
Եւ զետօրէն ուղխն ճապաղեաց զեղու ըզդաշտն լայ-
նատարը .
Հեծէ երկիր, հեծէ Բելլոն ընդ ծառն բեռինն ընդ
կըշիռ .
Եւ բաղմախաբ սրլաք նետիցն բա՛ ընդ այերս կայր
'ի թիռ
Ծածկէր զՌղիմպ և ըզնորայն կանաչադեղ զդէմ
գրաւէր ,

---

(1) Դուստր արքային Վոլսկաց որ եկեալ յօգնութիւն Տու-
ռնեայ 'ի մարտին ընդդէմ Ենեայ , սպանաւ յԱրոնտեայ Տրո-
վացւոյ ։

(2) Նիզակ ։

Յաչացն Արեայ վեհ դիւցազանց, ստեղծելով նոր ե-
թեր։

Այսպէս ահա յորժամ պրսակ կայր յաղթութեան 'ի
յերկրայս.

Քաջն Արտաշէս 'ի յիւր յանդամս կերկին զկորով
վեհ ըզգաց,

Աչք հրրացայտ նա զերթ առիւծ դիմէր հուժկու 'ի
յոստոխս,

Եւ որերոյն անդ ըզհոգիս յերդէր յարքայն Երե-
բոս[1].

Զօրէն Ենեայ աստուածորդւոյն 'ի մեծ պայքար Տի-
բերեան,

Յորժամ զՄեսապ և զՍակրատոր և զՆետիկոս[2] հար
ըսպան։

Ահա անդէն և Տիսիբոն[3], ահ քստմնելի և տժգոյն,
Օձախուլ 'ի մէջ մոլի բիւրաւորաց 'ի դասուն,
Խրախոյս ձիւաղն անդընդային կարդայ 'ի բարձր 'ի
ղոչիւն,

---

(1) Ի դժոխս։

(2) Դիւցազունք Հռուտուլաց զորս Էնէաս սպան 'ի սաստկա-
նալ մարտին ընդդէմ Տուրնեայ։

(3) Հրէշ դժոխային։

Նիղակակցացլն Համայնից և Ալանաց անդ ողջոյն։
Լուաւ դիւցազն ծնունդ արքային քաջ Ալանաց վեհ
Սաթէն,
Զայն Տիսիբեայ և սէր մարտին իւր 'ի յանդամա-
դայ անդէն,
Ըզտէդ ՀՕՃեալ նա զերթ Պալլաս[1] 'ի Հայկազանց
պար դիմէր.
Զայս ընդ արհին աղերս արկեալ 'ի խոր սրտէ ընդ
ելթեր.
«Ըզքեզ կարդամ ինձ յօգնութիւն Ամպրոպայինդ
վեհ Արէս,
«Որ 'ի մարտին ըզքեզ Դիոս կարդեաց Տեուչ յաս-
պարէս
«Լեր ձեռընտուս ինձ տըկարիս 'ի յայս ձեռնարկ 'ի
վըսեմ,
«Եւ զոսոխին փարթամ զաւարս քեզ 'ի նըուէր
պարգևեմ»։
Սակայն աւաղ նորայն աղերս խառն ընդ այերըս
ցրուեալ
Զ'եղև կարող հընչել յՌղիմպ 'ի յաստուածոցն 'ի
կաճառ։

---

(1) Պալլաս որդի Եւանդրի արքայի Արկադացւոց որ էզբաւ յօգնութիւն Ենեայ և մենամարտեալ ընդ Տուրնեայ սպանաւ 'ի նմանէ։

Գնալով գնայր եւ սաստկանայր բորբոք մարտին հրայրեաց,
Ի՛ 'ի Հայկազունս անկաւ Սաթէն 'ի գերութեան 'ի ղեղթայս։
Անդ Հայ դիւցազն 'ի Կուր 'ի գետ նըշմարելով ըզպըսակ,
Ի յայն վառէր զիւր թըշնամին զերթ Կենտաւրեան[1] գոռ զաւակ։
Ապդ երկոքին հանդիպաբնակ առնուն տեղի յեզը գետոյն,
Եւ ծածանէր Կուր վէտ 'ի վէտ զերթ Տիբերիս մեծանուն։
Ահա անդէն եհաս գուժկան առ Ալանաց վեհ արքայն
Թէ իւր Սաթէն յիւր թըշնամիս տանէ զըսպաս գերութեան։
Ողբայր արքայն, եւ 'ի յաշխարս շատ նա յըղէր պաղատանս
Առ Արտաշէս զիւր խընդրելով զորդին Սաթէն վեհապանծ։
Դիւցազն Մասեաց գոգցեաց զԱլպեան կըրէր ըզվէտ 'ի սըրտի,
Եւ բընաւին չըզգայր զսլաք հեծեծանաց խղճալի։

---

(1). Կենտաւն 'ի Յունաստան, ուր գտանին գազանք բազումք։

Մելսիմանէ հընչէր զնուապ , ա՛հ , քանի՛ծն սը-
գալի ,
Հընչէր սաստիկ , եւ Ալանայ բաշխէր զաշխարս
լիուլի ։
Հայրն Արամազդ զոռ շանթընկէց Ամպրոպայինն
գերապանծ
Ի զուլթ հարեալ ողորմ քաջին ընդ այս թիրշուառ
ընդ արկած ։
Կոչէ զորդին իւր ըզՀերմէս պատգամաւոր Ոզիմ-
պեայ ։
Դընթայ Եթեր եւ գիւցազունն 'ի մեծ ըշտապ գայ
առ նա ։
« Ճարտարութեանդ , նա բարբառի , ո՛վ զանձ ան-
հուն քա՛ջդ Հերմէս ,
« Դիմեա՛ ընդ փոյթ զԱրտաշիսին ըզհեռ դարձո՛ 'ի
զուլթ մեծ » ։
Ասայ ըզոռեայդ . անդ ըզսօլերս եդեալ գիւցազն 'ի
յոտին ,
Ըզգաւազան առ զոսկեկուռ զայերս հերձնու բը-
նաւին ,
Գայ հասանէ նա Կուր 'ի զետ , եւ շուրջ դիմեալ
գերապանծ
Մաթինկանն[1] հեղու զՃարտար իւրոյ բանիցն
ըզճաճանչ ։

---

(1). Դուստր արքային Ալանայ ։

Ոտանու յանկարծ վեհ թագուհին 'ի դէմս ընդ-
նաղ լուսավառ,

Եւ փութապէս դիմէ 'ի դեռ ըզմեծ հելլենալ ըզ-
գուպար.

Ի գլուխ ժայռին կայ ըզդեցեալ զերթ Հռոմու-
լեանն[1] Հերսիլեայ[2],

Եւ յԱրտաշէս խրոխտ ձայնիւք 'ի դիւցազունն
զայս կարդայ.

« Աւ քեզ ուղղին բանքս այս ողջոյն վեհդ 'ի դիւ-
ցազնս Արտաշէս,

« Որ ոսոխիդ շատ պեղեցեր դամբանս 'ի մեծն 'ի
յԱրէս.

« Եւ՛կ հաւանեա՛ ինձ Ալանաց եղբայրազուրկ դըս-
տերիս,

« Եւ ա՛հ դարձ՛ ըզպատանիդ զիմ վեհ եղբայր
ծոց յԱզդիս.

« Զի շանթընկէցն չներէ երբէք զոռ դիւցազանց
քաջարի

« Վասըն միոյ քինու բառնալ զայլոց կենացըն
զուղի,

---

(1). Հռոմուլոս որդի Արեայ, որ շինեաց զՀռովմ։

(2). Հերսիլիա դուստր Հռոմուլեայ, քաջ մարտիկ, որ զոցրացեալ 'ի մարտին ընդդէմ Նումա՝ զի նիզակիցք իւր ըմբէին զնա, հոքաւ զիւրովին։

«Եւ զբստերիկաց մատուցանել արքայազանց վեհ զբսպաս,
«Կամ ըզդուպար հորդել սաստիկ 'ի մէջ կերկին քաջ ազգաց»։
Ասաց լուեաց անդ Սաթինիկ Ճարտարախօս վեհն այն կոյս,
Իւրով գեղով զԱրտաշիսին ըզսիրտ տանջեալ ծը-փայոյզ։
Մինչ հասակ ապա անպարտելին անդ 'ի գեղոյն հարուածեալ,
Վերձուէ ըզդարձ նորին եղբօր խաղաղութիւն դաշ-նադրեալ,

1866 Ե. ԹԱԳԻՈՐ Ս. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ



ԱՌ ՆԱՔՈԼԷՈՆ Ա.

ՀՈՄԵՐՈՍԻՆ ասա՛ ինձ պիտի հիասքանչ
Գրիչ աշխոյժ ախորժալուր 'ի յականջ,
Հերմեսական կամ կրթութիւն դերագոյն,
Ասա ըզվեհիդ ճառել զարդիւնս 'ստ արժանւոյն.
Նոր Հոմերոս ՏԷՐ ՇՆՈՐՀԵԱ՛ 'ի յապայս
Հեղուլ 'ի գիր զարդիւնս ՎԵՀԻՍ քաջապանծ.
Նոր Կիկերոն[1] 'ի գիւտ ճառիցքն իւրում
Տիեզերաց տալ օրինակ բարեմոյն.

---

(1). Ճարտարախօս Հռովմայեցի։

Մի՛ քաջայաղթն այն յուսաւոյ պեռնային՝
Գալ 'ի կըշիռ ընդ քաջութեանցըն սորին։
Վեհն Աղեքսանդր հուրն Աքիլլէս եւ որ այլք
Առ արքայիւ Նաբոլէոն են անյարգ։
Եւրոպական յաղթ պետութիւնք համօրէն
Որ 'ի գըլուխ խոնարհեցան 'ի քաջէն.
Ի յաղթ զինուց իւր Արեւմուտք բովանդակ
Նուաճեցաւ Վեհիս եղեալ հըպատակ։
Զօրաբանակ Աւստրիոյ պետութեան
Ի Գաղղիացւոյն աբրոյ հարաւ տնկենդան։
Մինչ և զահի հարեալ մեծին Անգղիայ,
Զի մի՛ եւ իւր տրշաւեսցէ 'ի վերայ,
Դաշնակցութիւն փոյթ համօրէն ընդ Եւրոպ
Եղ՝ զի գողայր իւր սիրտ 'ի յահ եւ 'ի տրոփ,
Դաշնակցութիւն՝ ոյր բընաւին զօրութիւն
Զաշխարհս կարէր 'ի յիւր ընկճել պետութիւն։
Գերմանական զոռ պետութիւնք եւ Բըրուս,
Աւըստրիա եւ ռաղմաղէտըն զոռ Ռուս
Ի նոյն կապին դաշնադրութիւն յաղթական՝
Ի կործանումն Գաղղիական պետութեան.
Զուեն խաղան բանակքն Արեայ հրավառ
Ի դաշտավայրըս Վաթէրլեան լայնատարը,
Ուր Գաղղիացին Նաբոլէոն յաղթական
Անգղիացւոյն պեղէր մահու ըզդամբան։

---

(1). Իբէացին կամ Կարքեդոնացին Աննիբազ։

Ողջոյն բանակք եւ զօրութիւնք Եւրոպայ
Զուեն յառաջ յաղթականին 'ի վերայ։
Աչք աշխարհի անդ տեսանէ զրաւ բաղդին
Դարուս պարծանք Նաբոլէոն դիւցազնին։
Անդ պատերազմն նոր ըզդենու կերպարան,
Սիրա դիւցազնոյն յուսահատի Գաղղիական,
Որ զերթ առիւծ վառեալ կըրկին 'ի պայքար
Հարուստ հարուածս տայ թշնամեաց չարաչար։
Առիւծասիրտ Գաղղիացւոց ոտընկոխ
Գոռ ոսոխաց լինի զօրացըն ամբոխ։
Այլ հուսկ ապա պառարական յոսոխաց
Բանակն փոքրիկ Գաղղիական քաջապանծ
Ի սաստ հարուածս եւ հաբկանեն հարկանին,
Եւ 'ի գաշտին ըստուար ամբոխք անկանին։
Նաբոլէոն անդ զօրավարն քաջարիւն
Տեսեալ զիւրոց ըզսակաւուցըն պարտուն,
Զայս ընդ անձին ասաուածընդդէմ բարբառի.
«Բա՛ղդ յեղյեղուկ բա՛ղդ ոխերիմ թըշնամի,
«Ցե՞րբ դու յինէն ցե՞րբ խուսեսցես 'ի բացեայ.
«Ցե՞րբ ոսոխաց ըզթեկն ածցես, ցե՞րբ, ասա։
«Ա՞յս իմ քաջիս պերճ յաղթութեանց բազմարբեր
«Ա՞յս եղկելի անյուսալի տըրիտուր։
«Ես որ՞ երբեմն ահեղախրոխտ 'ի ճակատս,
«Դէմ ոսոխաց հանգիսացայ մըշտայաղթ,
«Ես որ երբեմն զայլոց կենացըն զուղի
«Միով բանիւ 'ի մահ ւ'ի կեանս վճռէի։

« Արդ զի՞ արդեօք իմոց բակկաց զօրութիւն
« Տրկարացաւ 'ի սաստ հարուած թշնամւոյն.
« Իմ զօրութիւն չեհաս յիւրումն նըպատակ,
« Արդ, ոսոխաց, ընկճեալ լիցի հրպատակ։
« Եղո՛ւկ քեզ վեհդ բիւրիցս աւա՛ղ Գաղղիա,
« Վախճան քաջիդ եւ քո փառաց հաս ահա՛ »։
Զայս ասացեալ 'ի սիրտ լըքեալ ձեռընթափ
Ցանգղիական դիմեաց բանակ փոյթ ըշտապ,
Ի կամս յանձնեալ զինքն խուռներամ ոսոխաց.
Ոըք միակամ դատապարտեն յաքսորանս,
Ի Հեղինէ յապառաժուտ 'ի կղզի
Պահապանաւ Անգղիացի սոսկալի։
Անդ գոռ սարսափն եւ ահն ողջոյն Եւրոպայ
Կամաց միոյ վատ թշնամւոյ հնազանդ կայ.
Եւ որ երբեմն ըզգոռ զըլուխս Եւրոպայ
Ցիւր զօրութիւն հար հարուածեաց անխընայ,
Հնազանդեալ պահապանին խաղալի,
Նորին կամաց ըսպաս տանէր քաջն արի։
Այլ ամուսնոյն սէր յիշատակ տըխրալի,
Եւ անջատման որդւոյ իւրոյ սիրելի,
Որ 'ի ճակատս հանդիսացաւ աննկուն
Գոռ ոսոխաց զէմ բանակացըն ողջոյն,
Անդ հարուածեալ յիշատակաց 'ի տըխուր,
Ցերակըս գող եւ ահ պատէ մարմին զիւր։
Գարմանական խընամք եւ ջանք Հերմեսեան
Ի զուր վատնին զի հաս քաջինըն վախճան,
Եւ Հեղինէ ապառաժուտ Սուրբ Կըղզին
Լինի դամբան Գաղղիացի դիւցազին։

1865 Գ. ՆՇԱՆ ՄԻՐԶԱ. ՎԱՆՈՒՆԴԵՑԻ

ՅԱՔՍՈՐԱՆՍ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ

Հէք թշուառիս կորուսեալոյ 'ի յաքսոր
Հնգեակ տխուր եղև շրջան տարեւոր,
Շրջան բարէ՛ ծանրատաղտուկ սոսկալի
Կորուսելոյս վա՛ղ 'ի ծոցէն մայրենի։
Շքեղ աւուրց իմ 'ի վերայ քօղ նըսեմ
Արկ ո՛հ եղո՛ւկ այս աքսորանք տարաղէմ։
Գարուն տիոց իմ փոխանակ բախճանաց
Ա՞ստ մաշեցայց 'ի դերեզմա՞ն կենդանեաց։
Սիրուն կոչման սէ՛ր ամուսնոյս փոխանակ
Զայնք շըղթայից սլանան յականջս անդաշնակ.
Ապարանաց իմ փոխանակ փառաւոր
Տըխուր բանտիս տեսք երևին սղաւոր։
Ո՞ւր ամուսինս ո՞ւր և որդիք իմ երկու. —
Ի տառապանս զահավիժին ահարկու։
Զի՞նչ իմ բարէ՛ երջանկութեան փառաւոր
Զի՞նչ յաջորդեն. — թշուառութիւնք ահաւոր։
Թշուառութեան բարէ, երկինք, դառնահամ
Ինձ բաժակին արժան դատես այս անկամ.

Այլ չեմ կարող տանել սոցա, Ե՛րկինք, միշտ
Ի փափկութեան էի սընեալ ես անվիշտ։
Ի զիրդ զըզուանս 'ի ծոց սիրուն մայրենի
Ցաշխարհային 'ի փորձութեանց միշտ հեռի։
Իսկ արդ բաբէ՛ այս սոսկալի աքսորանք
Շըքեղ աւուրցս երջանկութեան իմ փականք.
Փափկասընունդ թշուառ հոդիս ո՜հ ըզկեանս
Մաշէ, հիւծէ յանլուծելի 'ի շըղթայս։
Այց արա, Տէր. այց թշուառիս տարաբաղդ,
Գըթա՛ 'ի հէգս ողորմութեամբդ յորդառատ։
Մի՛ զիս թողուր 'ի բանտս շըղթայս կորընչել,
Մի՛ մի՛ բընաւ, հայցեմ զքէն, տէր իմ տէր...
Զի՞նչ այս ազդմունք յանձինս զդամ դառնաղէտ,
Հիւծիմ մաշիմ, կեանք սըլանայ ետ ընդ ետ.
Ցո՞ր վայր դեռ ևս խորասուզիմ գահավէժ,
Զի՞ք ինձ անդորր, չի՞ք և զերծու� 'ի բանտէս։
Անձկակարօտ իմ ընտանեացս զծարաւ
Ի տես անձինս ի՞ւ շինջուցից զէթ սակաւ.
Ահա՛ 'ի սիրտ լքեալ զաստիս դառնագոյն
Ի յահաւորն զիմեմ յատեան Բարձրելոյն։
Իսկ արդ զդամ զի մերկանամ յարևէ,
Ո՞ զիմաշկունս 'ի յաշխարհի փակեսցէ.
Տէր զի՞ դառն է մահու բաժակ և դժուար,
Ի յաքսորանս առնուլ յերկիր 'ի յօտար։

Բա՛, ցոլանան բանտիս որմունք՝ ի լոյս մեծ,
Թշուառութեանցս արդեօք երկինք վճռեաց վերջ.
Հրեշտակ կենացս իմ ընթանայ առ ընթեր,
Բաբէ՛ հիդիս... կա՛լ զձեռաց... Տէ՛ր իմ տէ՛ր...

1865 Գ. ՆՇԱՆ ՄՈՒՐՃԱ. ՎԱՆԱՆԴԵՑԻ

ԱՌԱ ՄՍՏՊԱՏԱՌԱՅ

ՀԱՑՐ մուսայից դու Մեղեսեան վեհ ծնունդ,
Ալդ կարկառեա՛ ինձ 'ի սատար, վեհանո՛ւնդ,
Հելլենացւոյն այն Պատրոկղեայ քաջութեան
Երգել ըզմահն այն սրգալի անպայման։
Յորժամ հուժկու Դարդանացին և Հելլէն
Ի յասպարէսն[1] դեռս ծիրանիս ստեղծեն,
Ահա՛ յայնժամ քաջն այն Հեկտոր կորովին
Ի Հեփեստոս[2] մատնէր ըզնաւս ոսոխին։
Յոյն որերոյն հրաբորբոքն տեսեալ զբոց,
Ի նաւակաց դիմեն 'ի յողբ և 'ի կոծ.
Իսկ պատրոկղէս զօրհաս գուժեալ չարութեան,
Առ Աքիլլէս դիմէ ընդ փոյթ Լաբիսեան.
«Ասուած որդիդ, նա բարբառի, իմ եղբայր,
«Արդ պատրաստի Հելլէն թագին օրհաս չար.
«Գուպար նաւուցս 'ի հուր վառին Դարդանեան,
«Եւ մեր հրոսակ ՃԸՉէ ողբայ անպայման։

---

(1) Ի դաշտ պատերազմին։

(2) Ի հուր։

«Քեզ պաղատիմ և քո 'ի ծունր կամ ահա,
«Գթա 'ի քոյդ ի՛ զմեզ մատներ դու Տրովայ.
«Ա՛ռ քո ըզզէնս, 'ի բաց վանեա՛ քոյդ ըզհեռ[1],
«Եւ Պրիամ օրհաս դուժեա՛ մահաբեր»։
Ասաց լուեաց Հելլենացւոց դիւցազուն,
Եւ Աքիլլեայ տակաւ տակաւ հեռք ցածնուն.
Ահա անդէն յարեաւ դիւցազն զայրացեալ,
Եւ 'ի նրկատ զԱդամեմնեան առ ըզպար։
Ի հրոյն տեսիլ քըստմնի դիւցազն անպատում,
Եւ ձայն բառնայ առ Պատրոկղէս քաջանուն.
«Իմ բարեկամ քաջակորով 'ի մարտի,
«ԶԱթենասայն ա՛ռ քո յանդամս քաջարի.

---

(1) Յամին Տրոյական պատերազմին տւար առեալ Յունաց քաղաքս 'ի սահմանակցաց անտի Տրոյիոյ յափշտակեցին զԽրիւսանոյշ և զԲրիւսանոյշ զդուստր քրմապետին Քրիսեսի. Աքիլլէս էառ զԲրիւսանոյշ և Ագամեմնոն զԽրիւսանոյշ։ Սակայն լուեալ քրմապետին զիւրոյ դստերն զկորուստ, խնդրեաց զնա պաղատանօք 'ի յարքայէն Ագամեմնեայ. որ ոչ հաճեցաւ կատարել զխնդիրն։ Ապողոն խղճացեալ 'ի վերայ ծերունւոյն պատուհասէր զՅոյնս ահռելի ախտիւն։ Ագամեմնոն տեսեալ զկորուստ իւրայնոցն և երկուցեալ նաև 'ի նոցանէ, յետս դարձոյց զդուստր քրմապետին և անիրաւութեամբ յափշտակեաց զԲրիւսանոյշ. Աքիլլէս սաստիկ զայրացեալ 'ի յայս անիրաւութիւն լքեաց զբանակն և մնուցանէր 'ի սրտի իւրում զսաստիկ հեռ ընդդէմ Ագամեմնեաց որ յետոյ զիջաւ մահուամբն Պատրոկղեայ։

«Դու զիմ զՀանդերձս ա՛րկ քաջազուն քո յիրան
«Եւ դի՛ր 'ի գլուխդ զիմ սաղաւարտ յաղթական.
«ԸնդՀեփեստեայն զահեղ վահանն ոսկեՀուռ
«Եւ զիմ սուսեր կալ 'ի ձեռինդ սայրասուր.
«Դիմեա՛ արագ, լե՛ր դու սասար յայդ աղէտ,
«Եւ ընդՀեկտոր վանեա՛ 'ի քաց 'ի մարտէդ»։
Ասաց Աքիլլ և Պատրոկղէս քաջարին
Զգեցեալ զՀանդերձս աստուածորդւոյն պանծալին.
Սուր 'ի ձեռին զերթ Լարիսեանն աննըկուն,
Ի թշնամեաց դիմէ 'ի պար սաստկագոյն.
Եւ անդ Հեկտոր ընդդէմ 'ի նշմար Աքիլլեան
Ելիք ընդնաւս և ռահ խընդրէր փախըստեան։
Անդէն Հելլէնն յաՀառապինդ իւր յանդամս
Զդաց զկորով ընտէդ ՀօՀէր զերթ Պալլաս.
Դիմէ Հուժկու Դարդանացւոյն 'ի վերայ
Նորայն մըխեալ 'ի սիրտ զսուսեր անխնայ.
Ետես Հեկտոր, ա՛Հ ժամ ա՛Հեղ... մահառիթ,
Ետես ծանեաւ... անդ Պատրոկղեան դիմաց զտիպ.
Դարձեալ անդէն յետս ընդ կրունկն զայրացեալ
Բարձր 'ի գոչիւն դիմէ Յունաց 'ի գուպար։
«Զքեզ Պատրոկղէսդ, զքե՛զ վատագոյնդ 'ի Հել-
լէնս,
«Մենամարտին կարդայ Հեկտոր յասպարէս.
«Քո եղեռանդ այս է պտակ շատ վայել,
«Եւ խաբ դիմացդ այս ողիմպոս տայ նուէր».

Ասաց դիւցազն և մռնչէր սաստկագին
Նա Նումիդեան կրելով զզայրոյթ 'ի յանձին։
Անդ Պատրոկղէս 'ի սաստ գոչիւն Հեկտորին
Մերժեալ զերկիւղ սրանայ 'ի դաշտ ահագին.
Անդ երկոքին ճօճեն ըզտէդ 'ի բացեայ
Եւ ըզվահանըս շկահեն պղնձեայ.
Ի յասպարէս Հելլենացիք և Դարդանք
Աչք անքըթիթ կան յերկոսին ախոյեանք.
Դաշտն լայնատիւռ հնչէ 'ի ձայն վահանաց
Նոքա զիրեարս բաղխեն 'ի սաստ 'ի հարուած.
Սակայն աւա՜ղ... ո՛հ քանիօն սգալի՛....
Քանից ողբոց հառաչանաց արժանի...։
Յանկարծակի գայ մահացուն դշխոյ[1] չար.
Առ Պատրոկղէս նորայն մկրատ էր ուղղեալ..։
Ահա անդէն քաջ ախոյեանն Տրովադայ
Լարեայ ըզնետ զերթ Ապողոն երկնակայ.
Սլաքն անողորմ զօրէն շանթից դերագոյն
Ճախրէր ընդ օդս, գայր մերձենայր... սակայն ո՞ւմ
Ա՛հ իմն գրիչ զի՞ կաս անշարժ զիա՞րդ ահ..
— Քանզի սլաքն առ Պատրոկղէս բերէր մահ...

---

(1) Ատրովպէ որ մկրատոմն իւրով բնկանէ զթէլ որ կայ 'ի միջի հոգւոյ և մարմնոյ մարդոյն։

Եկն և եհաս նեռն անողորմ չար հարուած . . ,
Հելլենացւոյն ընդ վեհ ընդ սիրտ թափ էանց ։
Անկաւ դիակն յիւր ճապաղիս վարդագոյն
Անշնչացաւ մարմին քաջին գերագոյն . . ։

1866 Ե. ԹԱԳԻՈՐ Ս. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ



ԳԵՐԵԼՆ ՇԱՀԱԲԱՍՈՒ ԶՀԱՅՍ

Ի ԽՈՒԺԱՍՏԱՆ

Մեծ Շահաբաս արքայն Պարսից 'ի դուռ
մրցմունս ընդ Տաճկաց
Մինչ յաջողեալ դիւցազնաբար էառ զաշխարհն Հայ-
կազանց,
Յոլովաձեռըն բազմութեամբ պատրաստէին յար-
շաւել
Հազարացիք 'ի Խուժաստան գերել զբնաւս անար-
գել։
Գուժկան եկաս առ Շահաբաս, գուժկան ախո՛ւր
ահաւո՛ր
Եւ պատրաստէր դիմակալել դէմ թշնամւոյն զօ-
րաւոր.
Եւ զի ոսոխք Հազարացիք 'ի Հայաստան յաշխարհ
մեր
Արշաւելով մարթանային 'ի Խուժաստան մտանել,
Եկ հրաման յԱրեաց տեառնէ զի ամենայն Հայկա-
զունք
Ի յԱյրարատ ժողովեսցին. ծերք. չափահասք և
մանկունք։
Զի Շահաբաս զոռ բռնակալն կամէր թէ իւր թըշ-
նամին

Պատսպարան մի՛ ոչ զոցէ և ոչ պաշար բընաւին ։ Խորհուրդ բա՛ չար յիւր միտս յղաւ ։ Հրամայեաց Շահաբաս ։

Յաւար առնուլ կիզուլ բնաւին զաշխարհ Հայոց վեհ-հապանծ ։

Սլացան հալածէպ սէգ խուժադուժք 'ի Հայաստան յաշխարհ մեր ,

Արշաւելով յաջ և յահեակ մտին 'ի ներքս անարգել ,

Թնդաց աշխարհն յահեղ ձայնէն զոր խուժադուժք զոչէին

«Օն ՅԱ.յրարատ . օ՛ն փութացէք այս է Հրաման արքային» ։

Ամպ մըթապին զանդորրութիւն Հայաստանեայց աշխարհին

Ծածկեաց բընաւս 'ի ուղ թողեալ զնա աւա՛ղ թախծագին ,

Ահաբեկեալ բաղմաց մեծաց յանակնկալն 'ի չարեաց ,

Թողին զիւրեանց ըզհայրենիս և որ 'ի նա ըստացուած ։

Մեծ ըշտապաւ երկիւղ 'ի սիրտ վաղ փութացին ՅԱ.յրարատ ,

Ուր յորդասահ ականակիտ հոսէր պայծառ գետն Եփրատ ,

Օձապտոյտ հորդեալուղի ընդ ձորամէջս խորափոր ,

Եւ ընդ ահեղ տեսիլ նորին երկեան հայք յոյժ անդադանօր ։

Անդ էր բազմաալ մեծ Շահաբաս երևելի բոլորից,
Յոսկի 'ի գահ ականակուռ և թագ 'ի գլուխ շքալից,
Հրամայեաց վաղվաղակի լաստս և նաւակս անդ ա-
ծել,
Ծերք և կանայք նոյն և մանկունք անդ և տկարք
մտանել։
Զակահասից հրամայեաց ընդ գետն 'ի լոզ ան-
ցանել,
Եւ ակարողք խեղք և տըկարք 'ի լաստս զգետն
հատանել,
Հրամէր առոյգ քաջաց վաղ անկանել յԵփրատ
գետ
Որոյ ալիք ականակիտ մերթ բարձրանայր վէտ 'ի
վէտ,
Եւ որոգէր ըզդաշտորայս որք կային անդ ըզնովաւ
ընդ մեծութիւն լայնատարած, Հայկեանն յապուշ
անդ հարաւ։
Մինչդեռ ետես մեծ Շահաբաս զի գժկամակ 'ի
յայն են,
Հրամայեաց զօրաց իւրոց զ'ի տէզ զնոսա անդ
արկցեն
Սիրտ անօրէն, վէմ անզգայ, որ քան զԱլպեան
ես անգութ։
Ողբք աղաչանք և հեծութիւնք աւաղ 'ի զուր, ան-
օգուտ։
Եւ վերջապէս տեսին թշուառքն, են աղաչանք ըն-
դունայն,

Ելքեալ զաստիս յոյս առ Աստուած 'ի խորափոր
զետ անկան։

Ո՛վ տեսարան սարսափելի զժոխըմբեր յաղթութիւն,
Զի վերանան արիւնք սոցին յաթոռ վերիժակ Բարձ-
րելոյն,

Ահա անդէն Եւոդոսեան Հիւսիսային հողմք ուժգին,
Զդետն յանդորրու մըրրկածուփ զօրէն ծովու յու-
զէին,

Ցուրտն սաստկագին ձիւնն հողմախառն որոտընդոստ
և փայլակ,

Անդ ըզդահու շուրջ տեղային սէգ արքային դը-
ժընդակ,

Գոռայր երկինք, գոռայր և զետ, և ցուրտ հող-
մունք փչէին,

Ի հրաշալեացս յապուշ կրթեալ գողայր և սիրտ
արքային,

Գոռայր սաստիկ մեծն Եւոդոս հրճուէր անգութն
Ատրովպէ[1].

Ողին Հայկեան լայ և ողբայ. մեծն Այրարատ ա՛հ
հեծէ...

Յողիմպն բազմեալ Արքայն հրզօր ետես թէ այն
պատուհաս՝

Որ առ Աքաս, ճախողաբար գառնայր աւա՛ղ Հայ-
կազանց,

---

(1) Մին յերից քերցն դժոխայնոց, որ մահաբեր մկրատիւ
կարճէր զընթացս կենաց մարդկան։

Ի մի ակնարկ դաղարեցոյց անդ ըզգայրոյթ գոռ
հողմոյն
Յոյս կազդուրիչ արկեալ 'ի սիրտ լքեալ թշուառ
Հայկազնւոյն.
Գեան այն Եփրատ որ մրրրրկեալ ալէկոծէր սաստ-
կագին,
Արիւնախառն հոսեալ վէճիտ հեծեաց և ինքն լալա-
գին,
Տեսիլ ահեղ և գթաշարժ. մինչ յաղեցեալ չև
եւ էր
Գաղանն ասեմ արիւնարբու գոռն Շահաբաս ան-
վեհէր,
Դէմ հրաշալեաց հիանալի լեալ անյողդողդ բրնա-
ւին,
Ոչ կասեցեալ յիւր խորհրդոյն նեղէր ըզՀայս վե-
րստին.
Քաջակորով պարք Թորգոմեան 'ի սառս 'ի ցուրտս
լի փութով՝
Ի հասանել 'ի գեղափունս, 'ի լոգ կային անխը-
ռով.
Զայլսըն ասեմ և գթաշարժն որք 'ի լոգու

Տէրն Հըզօրայ և չընչենաց էն զԵրազօր զԵրաղոյն,
Որ և եցոյց զողորմութիւն իւր ահաւոր և անհուն,
Յայն արկածէն համայնաջինջ ըզզերդաստանս Հայ-
կազուն

Իբրև ըզբիւր մի և երկու հազար զերծեալ մազա-
պուր,
Ի Գետափունս առաջնորդեաց Խուժաստանին 'ի տը-
խուր,
Օր սեազգեաց օր տրտմութեանց ա՛հ քանի՛օն և սը-
զոց,
Յոր յանիծից մեծ Շահաբաս որք տեղային Իբրե-
բոց,
Կայր ընկղմեալ և յուսահատ յապարանին նըզովեալ
Գոյն գունատեալ վայրապ զիմօք զարտօսր հեղոյր
սեափայլ։
Այլք ցնծային մըտաբերեալ զզերծումն տխուր յար-
կածէն
Զի առաջի տեսանէին մահ և վտանգ սեադէմ։
«Դարձա՛ ըզմեզ ո՛վ Տէր Աստուած մեր զերազօր
զերաղոյն,
«Զերծո՛ ըզմեզո՛հ յայնպիսի չար յարկածից մահա-
բոյն։
«Տուր մեզ Աստուա՛ծ բիւրաբեղուն քո զերկնաձիր
ըզպարգև.
«Վերհից Վերհիդ զի բաշխուցու է երանութիւն մըշ-
տաև.

«Գրքեա՛ 'ի մեզ զի և լինցուք մեք յաշխարհիս մըշտայաղթ
«Դէմ ստատանի որ զմեզ փորձէ որսալ տանջողք յիւր թակարդ։

1865 Գ. ՆՇԱՆ ՄԻՐԶԱ. ՎԱՆԱՆԴԵՑԻ

Աղ Արարչէս

Ո՞ՒՐ սըլանաս ո՛ մեծ պաշտպանդ Հայաստան,
եայց աշխարհին
Ո՞ւր դու թողուս զՀայրենիսդ զխանձարուրն պան-
ծալին.
Ո՛ Արտաշէս արքայդ հըզօր Հայաստանեայց յաղ-
թանակ
Ո՞ւր են բազուկք քո զօրաւորք պերճ յաղթութեանց
նըշանակ.
Զի՞ դու այդպէս հրեշտակադէմ զի՞ 'ի յերկինս վե-
րանաս,
Եւ ո՞ւր թողուս զՀայրենիսդ ո՛հ 'ի ձեռըս ոսոխաց։
Սաւգ անփառատ արդ զզեցիր մայրդ Հայաստան,
դիւցազանց,
Զի արդ չինչաւ բաղդին Հայոց Աստղըն շըքեղ լու-
սապանծ.
Ո՞ւր տէրութիւն միահեծան, ո՞ւր ճակատմունք քա-
ջապէս,
Իսկ արդ ընդէր մեռեալատիպ զոյն զզեցար Արտա-
շէս.

Լայնատարած դու ո՛վ Ողիմպ տես Հայաստան աշ-
խարէ

Զսիրելին իւր Արտաշէս ընդէ՞ր արկեր յարևէ.

Ո՞վ արդ լիցի այնքան զօրաց 'ի պայքարին քաջա-
լեր.

Ո՞վ երթիցէ դէ՛մ ոսոխաց ճակատելով անվեհեր.

Ո՛վ արդ լիցի վեհ ախոյեան Հայաստանեայց աշ-
խարհին

Ո՞վ ամբարձցէ զահեղ նիզակդ անպարտելի 'ի մար-
տին.

Ո՞ւր է տեսիլդ զուարթագին որով պանծայր Հա-
յաստան

Ո՞ւր այց ոգի ճակատասէր որբ Հայկազանց ախոյ-
եան.

Ո՞ւր վերանաս արդ սգերես ընդ պարս Երկնի Զու-
արթնոց

Ո՞ւր սրլանաս դու ո՞չ լսես վեհ Հայկազանց ձայն
զողբոց.

Սքտատոչոր ձայնք դիւցազանց պատեալ ընդ շուրջ
աշխարհաւ

Առաջ կարդան բաղդըն Հայոց Հայաստանեայց փառք
զինչա՛ւ։

Մխիթարե՛ց, մխիթարե՛ց դիւցազնամայրդ ո՛ աշ-
խարհ

Եւ օն փութա յարուցանել զայլ Արտաշէս քա-
ջաբար.

Զի երբեւ զնա պաշտպանեսցեն զքեզ յիւրեանց
Հայկեան ծոց
Եւ յոստից զերծեալ յաւէտ լիցիս ուրախ ընդ
Որդւոցդ։

Գ. ՆՇԱՆ. ՄԻՐԶԱ ՎԱՆԱՆԴԵՑԻ



ՅԱՂԹԱՆԱԿ ՀՌՈՄՈՒԼԵԱՅ

ԸՆԴԴԷՄ

ԱՆՏԵՄՆԱՅՈՅ

Ամպրոպայն քաջամարտիկ զոռն Արէս
Զհռոմուլոս ած աշխարհիս յապարէզ,
Դիւցազնս քաջ 'ի զարկացուն իւր 'ի ախս
Հօրն իւրոյ էած յանձին զարդասիս,
Ահառապինդ իւր 'ի բազուկ քաջութեան
Ի վերհն Տիբեր առ զարքունին զաւազան,
Թնդաց աշխարհ ա՛հ անպայման պաշարեաց
Զիտալիա 'ի քաջ բազկէն Հեսպերնթաց,
Հրզօր արքայն Անտեմնացւոց 'ի վերայ
Ճակատ բացեալ ահեղ մարտկօք իւր խաղայ,
Եւ զոռ զարքայն զԱկրոն դժնեայ զիւր ոսոխ
Սեմեան խեցւով[1] մատնէ անդ քաջն 'ի խողխող,
Զքնաղագեղն այն Հերսիլիայ դուստր վերհին
Ի սօս հեծեալ 'ի յերիվար թրակացին,
Եւ 'ի յազգեր կախեալ զՍեմեան զխեցին
Նա 'ի ձեռին ունէր զվահան կորովին,

---

(1) Սեմեան խեցի է Սուր։

Նորայն հանդերձ էր մինչ 'ի յոտս հանդրիճեալ
Եւ երևէր կոշիկք դստերն ոսկեփայլ,
Հոլաթևեալ հաս զերթ արծիւ 'ի Տիրեր
Ե ւ զյաղթութիւնն հօրն աւետէր , քաջ բանբեր։
Անդ դահակից վեհ ծերունին Տատիոս
Սպիտակազգեաց և թագ 'ի գլուխ վառ զերթ բոց
Ընդ զոռ դասուն քրմապետաց Ամպրոպեան
Եվ ընդ առաջ ի ր դահակցին յաղթական։
Որեարն անբաւ ջահս լուսավառ 'ի ձեռին
Աչք անքըթիթ 'ի տես մընայր յաղթողին։
Ահա՛ անդէն փողոց հնչիւն մեծաձայն
Տայր աւետումն Աստուածորդւոյն Գալատեան։
Եւ հուսկ յետոյ եվ 'ի բայէ յասպարէս
Ճաճանչաղեղ Արծիւ Հռովմայ զեղադէս,
Եւ դիւցազանց զուպար հրզօր քաջազուն
Խաղայր և զայր 'ի յիւր 'ի շէն վեհանուն։
Ահա՛ անդէն և Հռոմուլոս կորովին
Ի մեծաշուք կացեալ 'ի կառս 'ի յոտին,
Զոր ձիւնափայլ քառեակըք ձիք ձըգէին
Եւ քրթմնջիւն նոցա տիրէր 'ի դաշտին։
Անդ կորովին 'ի գլուխ պրսակ Սարդենեան
Եւ 'ի ձեռին բերէր կաղնի վեհ արքայն,
Յորոյ ոստոց էր Ակրոնին զէնք կախեալ
Եւ ընդ առաջ կառաց յաղթող ոսկեփայլ.
Հէդ ընտանիք կայր արքային պարտելոյն
Շղթայակապ և ,ալտասուաց եղեալ մոյն,

Եւ զհետ կառացն Լէգէոնաց էր դուպար
Ի խնդութեանց էին նոքա արբեցեալ.
Այսպէս ահա լայնածաւալ այն Տիբեր
Փառաց հնչէր ըզձիգ հանդէս իւր կայսեր.
Իսկ Հռոմուլոս ոստեալ կառացն մեծ արքայն
Ի Կապիտոլ մուտ հոյակապն 'ի մեհեան,
Ուր պաշտելի էր յայն դարուց 'ի շրջան
Հայրն Արամազդ դոռ շանթընկէցն Ամպրոպեան,
Եւ զԱկրոնին ետ անդ 'ի ձօն ճոխ զաւար
Ցարձանագիրս զօրն յիշելով բարեբար.
Եւ նա յետոյ բուռըն եհար քաջապէս
Ի զուարակէ և ած 'ի դիցն 'ի հանդէս,
Զսրբազանն անդ զոհ ածեալ 'ի կատար
Եվ 'ի յարտաքս և որերոյն զայս կարդար.
«Հռովմայեցիք, քաջակորովք ով որեար
«Զինչ բաւեսցէ մեզ այս միակ յաղթ դուպար,
«Անտեմեացւոց ազգն պարտեցաւ վատապէս
«Իմոյ վեհ հօրս յարիւնազանգն 'ի կրկէս,
«Սակայն Մարսիկք և վատ Հերնիկք և Վոլսիկք
«Զեն տակաւին ընդ մեր ըզծով կորովիք,
«Ազէ՛ լերուք վաղիւ պատրաստ 'ի ճակատ
«Ընդդէմ Մարսկաց ըզմեր բացեալ վեհ ճակատ.
«Նիզակակիցք աստ մեզ զայցեն 'ի սատար
«Կամպանիայ քաջակորովք պըսակեալ.
«Արդ շընորհեմ ձեզ դիւցազունք Հռոմոց
«Զայս օր ցերեկ ձեր 'ի հանդիստ անդամոց.

«Ցորժամ արիւն 'ի թագաւէ դայ հանդէս
«Սպառաղէն պաշէք յիմ հօրս ասպարէս.
«Ուստին բնաւին Իտալիան դու ազինք
«Զի դիւցազանց չէք բնաւ հանդիստ, բնա՛ւ չէք»։
Ասայ ըւեայ և քաջորեարն ծափս հարին
Ողջոյն Տիբեր լցաւ 'ի ձայն խրախուսին։

1866 Ե. ԹԱԳԻՈՐ Ս. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ



ՈՂԲ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞Ւ ՎԵՀ Տիգրանք քաջ, Արտաշէսք, ո՞ւր աղ-
գասէր Մխիթարք,
Տապաստ արկող ո՞ւր քաջազունք Հայաստանեայց
Մխիթարք.
Կամ ո՞ւր արդեօք վեհ դըղրդիչք լայնատարածըն
զաշխարհ
Ի բաց վանեալ 'ի Հայկազանց սուդ զաւերումն և
զաշխար.
Բագրատունին ո՞ւր այն Սմբատ Մերուժանայ Արծ-
րունւոյն
Վախճան տուիչ տապաստ արկեալ զնա յերկիր քա-
ջամոյն.
Ամատունին ո՞ւր այն Վահան քաջահարուածն 'ի
մարտին
Անզոյդ պատուար դէմ ոսոխաց պերճ Հայաստան
աշխարհին.
Ո՞ւր այն Վասակ վեհ հարազատ Մամիկոնեան Վա-
հանայ
Մոյն հազար տուողն 'ի մարտս հարուածս ահեղ
անխնայ.

Ո՞ւր արծիւն այն Հայկեան դըրօշ Այրարատայ 'ի
կատար
Ոսկիաձոյլ փառաց 'ի փառս հասեալ փայլըղ 'ի
կատար.
Ահ սիւնք անմահք էին նոքա Հայաստանեայց ան-
նման
Զի խանձարուրն 'ի սիրտս իւրոց վառէր զոգի պերճ
Հայկեան։

Գ. ՆՇԱՆ ՄԻՐԶԱ. ՎԱՆԱՆԴԵՑԻ

ՀԱՅ. ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.
Ա. Ա. Մասիսյանի
անվան գրադարան

Ս.Ո

ԳԻՐՔՍԱԶԵՏ ՀԱՅԿ

ԶԱՐԹԻ՛Ր Մուսայդ Հայաստանեայց, որ 'ի յա-
ծին բազմեալ ֆաջայց,
Զաւերակս առեալ վըկայս թշուառութեան երդեա
զարկածս
Ի ցանկալի՛ի քո քընար և զԴիւցազունըս Հայկազանց
Առնուս 'ի նիւթ քո քնարիդ առ 'ի լուսն վեհ
բաղձանացդ։
Զարթի՛ր, երդեա՛, ինձ աղէ՛ և զարդիւնս քաջին
անղուգական,
Որ դիւցազանց հանդիսացաւ չքնաղ տիպար Դիւ-
ցազնութեան.
Որ 'ի սուրբ սէր Միոյն վառեալ Միոյն և սուրբ
Երրորդութեան
Ցաղթանակեալ դէմ բռնութեան եկաց Էին փառաց
պաշտպան.
Որ զանիրաւ արհամարհեալ յոխորտ պատգամսըն
Նեբրովթայ,
Վատահ յԱստուած և յիրաւունս 'ի յիւր նախնեաց
կայան դառնայ.
Որ վառ 'ի սէր ամենակալ ստեղծողին զերկինն զեր-
կիր

Զլուծ ըշկահէ վատին Բէլայ որ իւր կենաց կայր
'ի խնդիր։

Բէլ յորոյ սիրտ ցասումն վառեալ կամաց զոհէր
զայն առ ժամայն

Թէ յիւր սահմանս ըմբոստանայր, այլ ակնածեալ
յըղէ պատգամ,

Պատիւ շը.քոյ բարձ խոստանայ զյամառութիւն թէ
մերկասցի,

Իսկ թէ այլազգ, քանզ և աւեր պատճառիցին յիւր
աշխարհի։

Հայկ՝ որոյ սիրտ աներկեան յՈր Էն կեցեալ կայր
հաստատուն

Երհամարհեալ զԲէլայն պատգամս մերժեալ զանբաւ
աւաղութիւնս,

Յայտնի պարզեալ զդրօշակ ապստամբի ընդդէմ Բէ-
լայ

Որ անկանիլ կայր դահավէժ զի ամբարձաւ իսկ
բարձրապահ։

Հայկ՝ որ 'ի սիրտ արբանեկէրն Աստուածային կա-
մաց արդար

Երհամարհեալ ամբարտաւան զոռ Հսկային զահեղ
ճամբար։

Պատիժ մահու երդուեալ Բէլայ որ զայր անշուշտ
իսկ հասանել

Զի՞ որ կարաց մահկանացու զէին փառաց նշոյլ
կապտել

Ըմբոստութիւն որ թէ ստոյգ ոչ հասանէ բնաւ 'ի
կատար

Եւ յանկատարն անդ ընդունի զիւր պատուհասն
չարաչար։
Գայր հասանէր բանակ կազմեալ երեք հարիւր հուժ-
կու արանց
Ի մարտ մղել ընդդէմ Բէլայ ընդդէմ դողին Էին
փառաց։
Գայ հասանէ նոյնպէս և Բէլ 'ի մերս Հայկայ բա-
նակին վայր
Անհնարին զօրու ծանու մինչ դաշտն ափիւռ անդ
անձկանայր։
Քաջալերին երկու կողմանք, մին՝ յոյս յԱստուած
անդ հաստատեալ,
Եւ միւսն՝ անոտի 'ի նշոյլս փառաց մահկանացու ա-
ռըն վառթար։
Եւ զոր կանխաւ իսկ ասացի, Հայկ՝ զորոյ ձեռն
Աստուած շարժէր
Յանդգնաբար դիմէ խիզախ անդ զառաջնորդն տա-
պաստ առնել,
Զերեքլմեանսն անդ լարեալ զամրակուռ նետսն
երկբերան
Յաջ 'ի կողից հարեալ զՀսկայն զարեան դեռոց
բանայ ըերան։
Անդ անկանի լեառըն մըսոյ, անդ շինջանին փառք
իւր համայն
Որ երազէր շինջուցանել ըզփառս Էին անանցական։

1866 Գ. ՆՇԱՆ ՄՒՐԶԱ. ՎԱՆԱՆԴԵՑԻ



ՄԱՀ

ԺԱՆ ՏԱՐՔԻ

ԱՄՊՐՈՊԱՅԻՆ այն ինչ գիւղաղն հրավառ[1]
Բրիտանական ծաղէր բլրոց 'ի կատար,
Պար զինուորաց 'ի լայնատարը յասպարէս
Կանգնէր խարոյկ կուսինն անմեղ գեղաղէս,
Ծերք և մանկունք արք չափահասք և կանայք
Գիմեն 'ի դաշտ յուրախալուր 'ի նուագ։

---

(1) Ամպոցն շաղուած արեգակամբ։

Սակայն վեհ ժան փառքն Գաղղիական աշխարհին
Ի սևաթույր նստեալ 'ի բանտ մթագին,
Ձեռս 'ի ծնօտ կայր մտախոհ ցաւագին
Եւ առտասուայ ուղխք 'ի յաչայ հոսէին.
Յանկարծ ահա 'ի դղրդիւն ահռելի
Հսկայաձեւք բացան ահեղ դրունք բանտի,
Դահիճք հուժկուք ելին կուսին յերևան
Ջահ 'ի ձեռին սուսեր 'ի մերկ զերթի պաշտան.
Մին 'ի նոցունց 'ի ձայն սաստիկ քստմնելի
Ձայս վեհ Կուսան հայրենասէր բարբառի.
«Ո՛վ Օրիորդ, ո՛վ դու ժպիրհ, արի՛ եկ
«Քոյդ մեծ ոճրոյդ ըզտրիտուր ընդունել»,
Ասաց դահիճն և կոյսն մարտիկ անվհիհեր
Յարեալ յոտին 'ի սոսկալին մահ դիմէր.
Վարդակարմիր շողշողէին նորայն այտք
Եւ առաջի կայր զոռ դահճաց զերթի հրեշտակ.
Եկին հասին 'ի լայնատարր յասպարէս
Ուր կայր ամբոխ 'ի տեսանել ըզհանդէս.
Ոգո՛ւմ տեսիլ դահիճք ըզսուր 'ի ձեռին
Զարիւն դստերն հայրենասէր խնդրէին,
Անդ և խարոյկն ջահ առ ընթեր սպասէր
Ըզվեհ կուսան կիզուլ մարմին վառ 'ի սէր.
Դաշտն լայնասփիւռ յանպղնացուոց հնչէ ձայն
Զոր զոչէին առ հասարակ պարն համայն.
«Մեռցի՛ յանդուգն, մեռցի՛ սաստիկ 'ի տանջանս
«Շատ նա չարիք հասոյց ո՛հ մեզ 'ի ճակատս»,
Դիւցազնուհին լուեալ ըզձայն ահռելի

Ձեռն քաջութեամբ զայս առ ամբոխն բարբառի.
«Արեաւնս իմոյ, ես ծարաւի. Անդղիա
«Ահա պատրաստ կայ իմըս լանջ օն փութա՛.
«Իսկ մի՛ յուսար որ իմս հեզեալ ճապաղի
«Ազատ լիցիս 'ի զոռ շանթից Գաղղիացի.
«Այ՛, մարմին իմ լքանէ զայս աշխարհ
«Սակայն անունս իմ մարտակցաց կեայ 'ի պար.
«Ճակատեսցին քաջ ախոյեանքն ընդդէմ քեզ
«Որպէս ընդ իս Օրլէանին յատպարէս.
«Օրլէանին ... ուր քոյդ հսկայ մեծ դուպար
«Սատակեցաւ ընդ սուսերաւս չարաչար.
«Ուր դու Պետֆորտ[1] վատ զօրապետ վատ զօրաց
«Յինէն վանեալ 'ի ծոց դարձար հայրենեաց.
«Երկի՛ր, ա՛նդութ. երկի՛ր ասեմ ա՛նզդամ
«Ի Գաղղիացւոյն յահեղ բազկէն յաղթական».
Զայս ասացեալ հանդարտեցաւ սիրտ կուսին
Եւ ծունր եկեալ զաչս վերամբարձ 'ի յերկին.
Մեծ Արքային Ցիեզերաց զայս յղէր
Ցրուեալ զհերս իւր ոսկեհեր ընդ այեր.
«Աստուածդ հզօր, զքեզ աղաչեմ. տապալեա
«Իմոց մեղաց ըզշեղջակոյտ ըզհսկայ.
«Ընդքոյդ խնդիր[2] ահա ածի 'ի կատար
«Մեր հայրենեաց նուիրելով զթագ պայծառ։

---

(1) Ճօն դուքս Պեդֆորտի, հօրեղբայր արքային Անդղիոց Հենրի Զ. կառավարիչ 'ի Գաղղիա, որ յետոյ վանեալ 'ի Ժան ա'Արքէն մեռաւ յԱնդղիա։

(2) Ժան ա'Արք ծնեալ 'ի սկիզբն հնգետասաներորդ դարուն,

«Այժ զդեցիք, անդամք մարմնոյս, այժ ահա
«Մահ պարծանաց ձեզ ասպարէս նոր բանայ.
«Բարեաւ կացջիք մարդաղետինք ոիրատուն
«Եւ անպաճոյճ իմ շինական փոքրիկ տուն,
«Նոյնպէս և դուք քաջակորով մարտակիցք
«Բարեաւ կեցեալ պաշտպանեցէք զՀայրենիք.
«Ահ կամէի ջնջել զոտիս Հայրենեաց
«Սակայն աւա՛ղ մահն յաղթական կայ կենաց.
«Բարեաւ կեցցես ծնող սիրելի դժբաղդ Հայր,
«Մի՛ արտասուեր զօրհաս մահուս իմ լուեալ.
«Զի՛ մեռանիմ 'ի սէր իմոյ Հայրենեաց
«Եւ փառաւոր է ինձ այս մահ քան զկեանս»։
Ասաց լռեաց և անդ դահիճք քստմնելի
Փայտիցն վերայ պրկեալ ըզկոյսն գեղանի.
Ջահս ընդ նովաւ եղին 'ի վառ սաստկապէս
Եւ հուրն ցայտէր շուրջ ըզկուսամբն գեղագէս.
Դիւցազնուհին... ո՛հ տակաւին... քաջարի
Ըզկիսայրեաց ցուցեալ բաղուկ կորովի.

էր դուստր շինականի ուրումն 'ի Գաղղիա. սակայն տեսեալ զաւերակս Հայրենի աշխարհին իւրում, կարծէր թէ ձայն դայր նմա յերկնից դիմել յասպարէս ճակատուն և վանել զԱնգղիացիս, և թագաւորեցուցանել զորդի արքային Շարլը Զ։ Օրիորդին զայս ասացեալ արքայորդւոյն, էառ 'ի նմանէ երիվար մի, և զէնս և քանի ինչ հազար զօրս, և դիմեալ յՕրլէան, ուր բանակէին Անգղիացիք. ստացաւ անդ զյաղթութիւն վանեալ զԱնգղիացիս յՕրլէանէն։ Զայս արարեալ էած զորդի արքային Շարլը Զ. 'ի յՕրլէան և անդ պսակեաց արքայ Գաղղիոյ։ Սակայն յետոյ ձեռբակալ եղեալ յԱնգղիացւոց, դատապարտեցաւ 'ի կենդանի կիզումն։

024

Անզղիայուց՝ ի զուռն կենաց մրմնջէ՝
«Ո՛ Գաղղիա... քաջակորով... իշխան... վեհ»։
Լռեաց վեհ կոյսն, ա՛հ, և լռեաց յաւիտեան
Եւ իւր մարմին անշնչացաւ յաղթական.
Եկայք Գուպարք յաւերժ հարսանց Եւտերպեան
Եկայք սփռել պսակս փառաց անթառամ,
Յաճիւնս կուսին հայրենասէր քաջարիւն,
Որ հեղ զարիւն վասն հայրենեաց սուրբ սիրոյն։

1866 Ե. ԹԱԳԻՈՒ Ս. ՊԱՐՑԻԶՊԱՆԵԱՆ

2m